ԱՐՄԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Հոգեբանական գիտությունների թեկնածու

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ԻԲՐԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Սույն հոդվածում քննարկվում է ընտանիքում և ընտանեկան փոխհարաբերություններում՝ բախումների, ճգնաժամերի և, վերջիններիս արդյունքում՝ ամուսնալուծությունների առաջացման մեխանիզմների վերաբերյալ մոտեցումները, ամուսնալուծության ռիսկերի և հաղթահարման մեխանիզմների դրսևորումները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ընտանիք, ընտանեկան փոխհարաբերություններ, ամուսնալուծություն, ամուսնալուծության ռիսկեր, ընտանեկան բախումներ, ճգնաժամեր, սոցիալիզացիա, ընտանեկան հոգեթերապիա, սոցիալական դերեր, ընտանեկան դերեր:

Ընտանիքի և ընտանեկան փոխհարաբորությունների վերաբերյալ բազմագործոն մոտեցումների, վերլուծությունների և հետազոտությունների մշտական արժևորումը մեր իրականության շրջանակներում նշանակում է հասարակության դինամիկ զարգացման հեռանկարային ապահովման գործընթաց, որը հնարավորություն է ընձեռում հասարակությանը յուրատիպ զարթոնք ապրելու, կենսակերպի՝ ժամանակի փոփոխություններին և մարտահրավերներին դիմագրավելու: Այս համատեքստում յուրովի քննարկման է արժանանում ընտանիք կառույցի ոչ միայն կազմավորման, այլև ամուսնալուծությունների վերաբերյալ հետազոտությունների համակազմը, որոնք ընդգրկում են ընանիք հասկացության բոլոր բնագավառները, բոլոր կենսաձևերը և աշխարհի տարբեր մասերում ապրող հասարակարգերը: Ամուսնալուծությունը նախ և առաջ ընտանեկան բախումների և ճգնաժամերի հետևանքներից մեկն է, որը տանում է ընտանիքի կազմալուծմանը և փաստացի վերացմանը: Այն որակվում է որպես ընտանեկան ոչ նորմատիվ ճգնաժամ, որը հիմնականում բովանդակում է անհերդաշնակ փոխհարաբերություններ, ընտանեկան կառույցի արմատական տեղաշարժ: Այս վիճակն ըստ էության պահանջում է ընտանիքի՝ որպես կառուցողական համակարգի վերակազմավորում կամ վերակառուցում, քանի որ առկա վիճակն արդեն անելանելի է համարվում երկու կողմերի համար: Բախումները և ճգնաժամերը, որոնք մղում են ընտանիքն ամուսնալուծության, արտահայտվում են հետևյալ կերպ. 1. երբ հակասության մեջ գտնվող պահանջմունքները կամ սպասումները

ակտիվորեն հակադրվում, բախվում են իրար,

2. երբ դրանք, որպես բախումների իրական և շոշափելի բաղադրամասեր, անհամատեղելի են,

3. երբ բացասական հույզերը շատ ուժեղ և իռացիոնալ են դառնում, որի հետևանքով կողմերի վարքին հաղորդվել է իմպուլսային և ագրեսիվ բնույթ,

4. երբ բախվող կողմերը հասկանում են, որ իրենք որպես անձնավորություններ անհամատեղելի են:

Բազմաթիվ են այն ընտանիքները, որոնք իրենց գոյության ժամանակահատվածում մեկ կամ մի քանի անգամ հայտնվում են ճգնաժամային իրավիճակներում: Այդ առումով պատահական չէ, որ ժամանակակից ընտանիքի հոգեբանության բնագավառում ճգնաժամերի ուսումնասիրությանը մեծ նշանակություն է տրվում:

Ընտանիքի (ներընտանեկան) փոխ-

հարաբերությունների ընթացքում ձգնաժամային իրավիճակները կարող ենք համալրել նաև հետևյալ դրույթներով.

- ամուսինների միջև ձգնաժամ կարող է ծագել միմյանց հանդեպ ունեցած պահանջմունքների և սպասումների շուրջ երկկողմ հիասթափության և անբավարարվածության արդյունքում:
- բախումներն ու ձգնաժամերն էլ ավելի սուր և տառապալից են լինում, երբ դրանք ծագում են մեկից ավելի պահանջմունքների չբավարարված մնալու հետևանքով: Հետևաբար այստեղ կարող ենք խոսել տարբեր բարդության բախումների և ձգնաժամերի մասին, քանի որ, սկզբունքորեն, որքան ցածր է բախման բարդության աստիճանը, այնքան ավելի հեշտ է մեղմել կամ լուծել այն: Բարդ բախումները, որոնք ընդգրկում են չբավարարված երկու կամ ավելի պահանջմունքներ և դերային սպասումներ, շատ դժվար է լուծել.
- ձգնաժամն էլ ավելի բարդ է դառնում, երբ դրանում ընդգրկվում են ոչ միայն հիմնական գործող անձինք (տվյալ դեպքում ամուսինները), այլև նրանց ռեֆերենտային խմբերը (օրինակ՝ ծնողների ընտանիքները).
- ներընտանեկան ձգնաժամը բարդ և ավերիչ է դառնում, երբ նրանում ընդգրկվում են նաև ընտանիքի այլ անդամներ, հատկապես երեխաները, այսինքն, երբ ընտանիքը տրոհվում է հակառակորդ խմբերի[9, էջ 266-268]:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ ամուսնալուծությունների թվական աճ է դիտարկվում գրեթե ողջ ժամանակակից աշխարհում, և ամուսնալուծության խնդիրը դարձել է ժամանակակից հասարակության ամենախոցելի հարցերից մեկը (եթե ոչ ամենագլխավորը), որից էլ, որպես կանոն, ծագում են անձի սոցիալականացմանը խոչընդոտող մի շարք ակնառու գործոններ (անլիարժեք ընտանիք, միայնակ մայր կամ հայր, երկկողմանի լքված երեխաներ և այլն): Մասնագետները փաստում են, որ ամուսնալուծությունների կտրուկ աճ է դիտվում թե՛ Եվրոպայում և ԱՄՆ-ում, թե՛ նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում, որն, իհարկե, խիստ անհանգստացնող երևույթ է բոլոր ժողովուրդների համար: Օրինակ՝ Ռուսաստանում ամուսնալուծվում է յուրաքանչյուր չորրորդ զույգը, ընդ որում, հետազոտվող տղամարդկանց 67, իսկ կանաց 32 %-ը գտել են, որ ամուսնալուծությունը հնարավոր էր կանխել: Ռուսաստանում 2004 թվականին արձանագրվել է հետևյալ փաստը. յուրաքանչյուր գրանցված 1000 ամուսնությանը զուգահեռ տեղի էր ունենում 800 ամուսնալուծություն, էականորեն նվազում էր ծնելիությունը: Ստացվում էր, որ այդ երկրում տարեկան միջին հաշվով ամուսնալուծվում էր 800000 ամուսնական զույգ, և մոտ 400000 երեխա մնում էր ապրելու անլիարժեք ընտանիքներում, մի իրողություն, որը նրանց սոցիալականացմանառումով լուրջ դժվարություններ և վտանգներ էր ստեղծում[9, էջ 329-338]: ԱՄՆ-ում, ըստ 1980 թվականի մարդահամարի տվյալների, բոլոր ամերիկացիների մոտավորապես 27 %-ը նորմալ ընտանիք չունի: Օրինակ՝ Սան Ֆրանցիսկոյում այդ թիվը կազմում է 53 %, Սիեթլում՝ 48 %, Վաշինգտոնում՝ 45 %, Օքլենդում՝ 44 %, Լոս Անջելեսում՝ 39 %, Նյու Յորքում՝ 37 % և այլն: Վերոբերյալ թվերը մեծ մասամբ վկայում են այն մասին, որ ԱՄՆ-ում ընտանիքը ձգնաժամ է ապրում: Այս տվյալները գիտնական Ն. Սմելզերը բերում է ԱՄՆ-ի վիճակագրական գրասենյակի հրապարակումներից և, ըստ այդմ, եզրակացնում, որ ԱՄՆ-ում ընտանիքն արմատական փոփոխություններ է կրում: ԱՄՆ-ի հասարակագետներն ու ընտանիքի հիմնախնդիրներով զբաղվողները փորձել են պարզել ամուսնալուծությունների թվական աճի պատճառները, որոնք, բացի նյութական վատ պայմաններից, ամուսինների միջև մի շարք խնդիրների կապակցությամբ ծագած բախումներն էին[9, էջ 331, 73, էջ 390]: Դրանցից

էին. ա) երեխաների դաստիարակության խնդրի շուրջ ծագող բախումներն ու վեճերը, բ) դերային բախումները (թե ընտանիքում ով և ինչ պարտականություններ պետք է կատարի) և հատկապես դերային բազմության դրսևորումները: Գիտնական Ն. Սմելզերը ենթադրում է, որ ընտանիքի համար առավել վտանգավոր են ամուսինների անձնային հոգեբանական տարբերությունները, նաև նրանց բնավորության այնպիսի գծերը, որոնք կողակցի կողմից գնահատվում են որպես տհաճ (օրինակ՝ հարբեցողությունը, ծխելը, թմրամոլությունը և այլն): Եվրոպական երկրների վիճակագրությունը վկայում է, որ յուրաքանչյուր 0,5 ժամը մեկ այնտեղ մեկ ընտանիք է լուծարվում [4, էջ 200]: Այսպես, օրինակ, ԵՄ երկրներում յուրաքանչյուր 2,2 ամուսնությանը բաժին է ընկնում 1 ամուսնալուծություն: 2004 թվականին Եվրոպայում գրանցվել է 2,2 միլիոն ամուսնություն (յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով՝ 4,8), բայց և նույն տարում արձանագրվել է մոտ մեկ միլիոն ամուսնալուծություն, այսինքն՝ յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով՝ 2,1 ամուսնալուծություն: Ամուսնալուծությունների ամենամեծ տոկոսը, տարեկան կտրվածքով, գրանցվել է Չեխիայում և Լիտվայում: Եվրոպայում 1990–2004 թվականների ամուսնալուծությունների քանակը կազմում է 10 միլիոն[9, էջ 332]: Բարվոք չէ վիճակը նաև Հայաստանի Հանրապետությունում: Այստեղ ևս արձանագրվում է ամուսնալուծությունների թվի աճ, որը, իհարկե, մեր երկրի ներկայիս վիճակի պարագայում ցավալի իրողություն է: Մեզանում ամենացածր ցուցանիշը գրանցվել է 20-րդ դարի 60-ական թվականներին (20928 ամուսնացածներից ամուսնալուծվել է 626-ը), իսկ ամենաբարձրը՝ 2007-ին (18145 ամուսնացածներից ամուսնալուծվել է 2931-ը): Իսկ եթե փաստենք, որ 2000 թ. ՀՀ-ում գրանցվել է 1343 ամուսնալուծություն, ապա 2007-ի վերոնշված ցուցանիշը վկայում է մեր երկրում ամուսնալուծության թվի աննախադեպ աճի մասին: Բարձրացել է նաև առաջին ամուսնության միջին տարիքը (և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակչության շրջանում). այսպես՝ եթե քաղաքաբնակ տղամարդկանց միջին տարիքը եղել է 25,9, աղջիկներինը՝ 22,5, իսկ գյուղաբնակներինը՝ 25,1 (տղաներ) և 20,3 (աղջիկներ), ապա 2007 թ. այդ տարիքն ունեցել է հետևյալ ցուցանիշները. քաղաքաբնակներինը՝ 28,7 (տղաներ), 25,1 (աղջիկներ), գյուղաբնակներինը՝ 27,5 (տղաներ), 23,1 (աղջիկներ) [5, էջ 116, 9, էջ 333–338]: Չնայած վերոնշյալ փաստերը վերջնական ու ստույգ չեն, սակայն, որ ամենացավալին է, կանխատեսումներն էլ հուսադրող չեն, քանի որ նկատելիորեն ավելանում է ամուսնալուծությունների քանակը՝ խաթարելով հասարակության աճի ու զարգացման բնականոն ընթացքը: Այս իմաստով, նախ փորձենք անդրադառնալ ամուսնալուծության հիմնական պատճառներին և առաջացման մեխանիզմներին, որոնք էականորեն նկարագրված են մասնագիտական գրականության մեջ: Է. Թիյտը առանձնացնում է ամուսնալուծության գործընթացին նպաստող 3 հիմնական գործոն.

Առաջինը ամուսնալուծության ռիսկ պարունակող անձնային գործոնն է, որի մեջ մտնում են ամուսինների անհատական-տիպոլոգիական առանձնահատկությունները, ծնողների ընտանեկան մոդելի նախատիպը, առողջական վիճակը, սոցիալ-ժողովրդական բնույթը և այլն: Այստեղ գիտնականը ներառում է նաև ապագա ամուսինների դաստիարակության գործոնը, այսինքն՝ այն պայմանները, որում գտնվել են ապագա ամուսինները. անլիարժեք ընտանիք և աններդաշնակ, խնդրահարույց ամուսնական փոխհարաբերություններ: Նա հատկապես կարևորում է մանկական տարիքում երեխայի հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի գործոնը, որը էականորեն ազդում է նրա՝ ապագայում կազմվելիք ընտանիքի և այնտեղ դրս-

նորվելիք փոխհարաբերությունների վրա: Ամուսինների տարիքային էական տարբերությունները, կրթական մակարդակը և սոցիալական կարգավիճակը նույնպես էականորեն ազդում են ապագա ամուսինների փոխհարաբերությունների վրա:

Երկրորդ գործոնը ընտանիք կազմելու նախապատմությունն է՝ ամուսնության մոտիվացիոն կողմը, ապագա զույգերի առաջնային (նախնական) համատեղելիությունը, որոնք ներառում են ապագա ամուսինների ծանոթացման, նրանց հույզերի ու զգացմունքների դրսևորման և նմանատիպ այլ իրավիճակներ: Է. Թիյտը գտնում էր, որ ամուսնության կայունության աստիճանը նվազում է, եթե ծանոթության (նախամուսնական) շրջանը կարճատև է եղել (կես տարուց պակաս), որը բավարար չի համարվում իրար լավ ճանաչելու և իրավահավասար փոխհարաբերություններ ձևավորելու համար: Նկատենք, որ չնայած հեղինակը վաղաժամ սեքսուալ հարաբերությունները չի դիտել որպես ամուսնության պահպանման կամ ամուսնալուծության նպաստող գործոն, սակայն անդրադարձել է վաղաժամ հղիության փաստին, որը վերլուծել է որպես ամուսնալուծությանը նպաստող կարևոր գործոն:

Երրորդ գործոնը ընտանիքի նորմալ գործառույթների իրականացմանը խոչընդոտող իրավիճակներն են, որոնք ներառում են կենցաղային և նյութական անբարենպաստ վիճակ, ընտանիքի անդամների դերային նորմալ փոխհարաբերությունների բացակայություն, ընտանիքի որևէ անդամի՝ առավել կարևոր պահանջմունքների դեպրիվացիա (չբավարարում), զույգերի դևիանտ վարքագիծ (ալկոհոլիզմ, նարկոմանիա), կոնֆլիկտայնության բարձր շեմ, սեքսուալ դիսհարմոնիա (աններդաշնակություն): Ս. Գոլոդը գտնում է, որ ինչպես ամուսնալուծությունների թվի աճը, այնպես էլ ծնելիության նվազումը պայմանավորված են ընտանիքի պատմական տիպով, այսինքն՝ եթե ընտանիքն իր պատմական նախորդ տեսակներից անցում է կատարում բջջային ընտանիքին, ապա վերոբերյալ գործընթացներն անխուսափելի են դառնում[8, էջ 23–33]: Սա իհարկե վիճելի հարց է, քանի որ դեռևս լիարժեք և հանգամանորեն ուսումնասիրված չէ: Սակայն գիտնականը, իր տեսակետների հաստատումն ապահովելու միտումով, բերում է առնվազն երկու հիմնական գործոն. ա) ամուսնությունը տևական և առավել բարենպաստ էր մեծ և նահապետական ընտանիքներում, քանի որ այնտեղ ամուսնական զույգերի վրա սոցիալական վերահսկողությունն ավելի լայն ու ինտենսիվ բնույթ ուներ, և այդ վերահսկողությունն իրագործողների թիվն ավելի մեծ էր, քան բջջային ընտանիքներում. բ) ամուսնու ընտրության ազատությունը ենթադրում է նաև ամուսնալուծվելու առավել դյուրին պայմաններ, եթե ստեղծված փոխհարաբերությունները կողմերին կամ նրանցից մեկին չեն բավարարում: Գիտնականն ամուսնալուծության և ծննդաբերության նվազմանը միտված կարևորագույն գործոն է համարում նաև սոցիալ-տնտեսական դժվար պայմանները, որը ևս, սակայն, միանշանակ ընդունել չի կարելի: Այսպես, օրինակ, նախկինում գյուղացիների մեծամասնությունը գոյատևում էր ծայրագույն աղքատության և թշվառության մեջ, սակայն ընտանիքներում շատ երեխաներ էին ծնվում, իսկ ներկայումս նյութապես բարվոք երկրներում ոչ միայն ծննդաբերությունն ունի նվազագույն մակարդակ, այլև ամուսնալուծությունների թիվն է չափազանց մեծ (օրինակ՝ Ֆրանսիա, ԱՄՆ, Կանադա և այլն): Կարելի է փաստել, որ Հայաստանում 20-րդ դարի վերջերին վերոբերյալ երկու միտումների՝ աղքատության և բջջային փոքր ընտանիքների թվական գերակշռության ուժեղացումը պայմանավորված էր նաև ՝ոչ լրիվ՝ ընտանիքների թվի աճով, քանի որ շատ տղամարդիկ

հարկադրված էին բարեկեցիկ կյանքի ապահովման միջոցներ փնտրել արտերկրում, իսկ հաճախ էլ ուղղակի հաստատվել այնտեղ: Ռուս հետազոտողներ Լ. Ռժանիցկայան և Վ. Արխանգելսկին, հենվելով հատկապես կանանց կարծիքների վրա, նշում են ամուսնալուծությունների հետևյալ պատճառները.

1. ամուսինների բնավորությունների հիմնական տարբերությունները,

2. ամուսինների հայացքների տարբերությունները,

3. հարբեցողությունը, թմրամոլությունը և այլ ախտաբանական հակումներ,

4. ամուսնական անհավատարմությունը,

5. ընտանիք կազմելու համար անպատրաստ լինելը:

Չնայած մեր հասարակարգում ևս դրանք համարվում են ամուսնալուծության առաջացման ընդհանուր պատճառներ, այնուամենայնիվ շատ ավելի մանրակրկիտ քննարկման և ուսումնասիրման պահանջ ունեն[9, էջ 337-338]: Ամուսնալուծության գործընթացը ներառում է երկու հիմնական շրջան. **բուն ամուսնալուծություն** և **հետամուսնալուծական շրջան**:

<u>Բուն ամուսնալուծության</u> շրջանում առանձնացվում է 3 հիմնական փուլ.

ա) ամուսնալուծության որոշման կայացում և վերջնական ընդունում,

բ) ընտանեկան կառույցի վերացում, տրոհում,

գ) սեպարացիայի փուլ:

Ամուսնալուծվելու որոշումը կայացվում է՝ ելնելով մի շարք էական հանգամանքներից, երբ՝ անընդհատ տեղի են ունենում ապակառուցողական և անսերդաշնակ փոխհարաբերություններ, վիճաբանություններ, աճում է տագնապայնության մակարդակը, անընդհատ լարվածության և հիասթափության մթնոլորտ է տիրում. ընտանիքում դիտվում է թշնամական մթնոլորտ, սիրո և հանդուրժողականության բացակայություն, տագնապայնության աճ, վատ տրամադրություն, այսինքն՝ գործոններ, որոնք հանգեցնում են էմոցիոնալ ամուսնալուծության բուն փաստին՝ ամուսնալուծության հիմնական գործընթացի սկզբնական փուլին: Ամուսնալուծության վերաբերյալ որոշման կայացումը և զուգընկերոջ հետ փոխհարաբերությունների վերջնական խզումը կարող են տևել օրեր, ամիսներ, կամ նույնիսկ տարիներ, քանի որ զույգերից քչերի մոտ է նկատվում արտահայտած որոշման միանգամից ընդունման փաստ: Սովորաբար, արդեն փաստացի նախկին ամուսինների մոտ նկատվում է ամբիվալենտ (երկակի) զգացմունքների մի ամբողջ շարք՝ քաոս և դատարկություն, էմոցիոնալ մերժվածության զգացում, և այնքան ժամանակ, մինչև որ հաստատվում է որոշման վերջնական ընդունման փաստը: Երկրորդ՝ *ընտանեկան կառույցի վերացման, տրոհման* փուլը սկսվում է ամուսիններից մեկի կամ երկուսի՝ ամուսնալուծության մասին վերջնական վճիռ կայացնելու փաստով: Այս փուլին ևս բնորոշ են բացասական-տագնապային զգացմունքային ապրումները, բարձր լարվածությունը և անընդմեջ ֆրուստրացված հոգեվիճակը, որը, իհարկե, անհնարին է դարձնում առողջ, տրամաբանական որոշումների ընդունումը, և իրավիճակն առավել տագնապալից է դառնում: Այս փուլում սովորաբար ակտիվանում են դերերի բաշխման և վերաբաշխման գործընթացի առավել արտահայտված տեսակները, քանի որ դերային անհամատեղելիության դրսևորումները հասնում են իրենց

արտահայտման գագաթնակետին: Այս փուլն իր հերթին ունենում է ենթափուլեր.

1) զգացմունքային ամուսնալուծություն, որը ենթադրում է զույգերի էմոցիոնալ սեպարացիան, այսինքն՝ զուգընկերոջ հանդեպ էմոցիոնալ կապվածության վերափոխումը, 2) ֆիզիկական ամուսնալուծություն, որը ներառում է տարածքային սեպարացիան, որն էլ իր հերթին հանգեցնում է նախկին ամուսինների

առանձին ապրելու գործընթացին, 3) տնտեսական ամուսնալուծություն, որը նեռառում է նախկին զույգերի՝ ամուսնության ընթացքում համատեղ ձեռք բերած ունեցվածքի ողջ գործընթացը, 4) սոցիալական ամուսնալուծություն, որը ներառում է երկու խնդիր. նախ ամուսիններն իրազեկում են ընտանիքի այլ անդամներին իրենց ամուսնալուծության փաստի և արդեն իսկ ընդունված որոշման մասին, և երկրորդ՝ ամուսիններն իրենց ամուսնալուծության մասին իրազեկում են ընկերներին, ծանոթներին, գործընկերներին՝ ըստ անհրաժեշտության, այսինքն՝ այս պարագայում իրազեկելու անհրաժեշտությունը բխում է օգնություն (հոգևոր, ֆիզիկական) հայցելու դրդապատճառից: Երրորդ փուլը ամուսինների վերջնական ամուսնալուծության՝ *սեպարացիայի* փուլն է, երբ փաստացի ավարտվում է ամուսինների համատեղ ապրելու և տնտեսություն վարելու գործընթացը: Այս փուլում ամուսինները հիմնականում ապրում են տարբեր վայրերում, սակայն լինում են դեպքեր, երբ բնակվում են նույն բնակարանում, սակայն բաժանում են սենյակը, խոհանոցը, բյուջեն և այլն:

<u>Հետամուսնական փուլը</u>՝ ամուսնալուծության մյուս շրջանը, իր հերթին բաժանվում է երեք հիմնական շրջափուլերի. 1) հետամուսնալուծական (մինչև 1 տարի), 2) վերակառուցման (2–3 տարի), 3)կայունացման (2–3 տարի): *Հետամուսնալուծական* շրջանում արդեն նախկին ամուսիններն ունենում են մի շարք դժվարություններ, բարդություններ, որոնք կապված են երեխաների դաստիարակության, որոշումների ընդունման, ֆինանսական դժվարությունների և այլ գործոնների հետ: Զույգերից յուրաքանչյուրը յուրովի է սկսում պայքարել վերոնշյալ իրավիճակների հաղթահարման համար, իսկ ամենակարևոր դժվարությունը՝ երեխաների դաստիարակության հիմնախնդիրը, պահանջում է արմատական տեղաշարժեր, դերերի նորովի վերագնահատում: Այստեղ շատ կարևոր է, որ երկու ծնողներն էլ ճիշտ ընկալեն և վերագնահատեն մոր և հոր դերերը, կարողանան այդ դերերը վեր դասել խնդրահարույց այլ դերային փոխհարաբերություններից, այլապես կկորցնեն արդեն երեխային, ինչպես կորցրեցին սեփական ամուսնական դաշինքը: *Ամուսնալուծության վերակառուցման* շրջափուլում կարծես ավարտվում է նախկին ամուսինների զգայական ամուսնալուծության գործընթացը, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում է «բուժել վերքերն» ու ձեռք բերել հոգեկան հանդարտություն, ընդորում, այդ հանդարտությունը փորձում է ձեռք բերել նոր զուգընկերոջ փնտրտուքներով: Մյուս դեպքում փորձում են նորովի ձևավորել ծնող–երեխա հարաբերությունները՝ ամբողջ հոգով տրվելով երեխայի հանդեպ սիրո դրսևորմանը և հաճախ նույն երեխային դարձնելով սեփական սիրո գերին: Հոգեբանական տեսանկյունից այսօրինակ սիրո դրսևորումը ախտածին է հատկապես երեխայի համար, քանի որ նա, արդեն իսկ մեծանալով անլիարժեք ընտանիքում, ձեռք է բերում նաև այնպիսի հոգեկան հատկանիշներ, որոնք հասարակական հարաբերությունների տիրույթում միանշանակ չեն ընդունվում: Զուգընկեր փնտրում և հաճախ կրկնակի ամուսնանում են տղամարդիկ: Հետազոտությունները վկայում են, որ տղամարդկանց 65 %–ը ամուսնանում է ամուսնալուծությունից 3–5 տարի անց: Ամուսնալուծության եզրափակիչ՝ *կայունացման* ենթափուլում սովորաբար հարթվում են ընտանեկան փոխհարաբերությունների վերակառուցման հետ կապված դժվարությունները, և նախկին ամուսինների միջև հաստատվում են հավասար «գործընկերային» փոխհարաբերություններ: Շփման սոցիալական ոլորտներում նրանց փոխհարաբերությունները դառնում են կայուն, նվազում է վրեժի, վիրավորանքի, տագնապայնության աստիճանը, երկուստեք վարքը դառնում է առավել քաղաքակիրթ և կա-

յուն: Այս փուլի վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև հոգեվերլուծող Ա. Մասլոուն, ով գտնում էր, որ բաժանումը (ամուսնալուծությունը) նախկին ընտանեկան փոխհարաբերությունների վերակառուցողական բարդ գործընթաց է, և առանձնացնում էր այդ գործընթացի յոթ հիմնական փուլեր. 1. Էմոցիոնալ (զգայական) ամուսնալուծություն – ենթադրում է ամուսնական կյանքի պայմանների հանդեպ անբավարարվածության զգացում, անուրջների և երազանքների փլուզում, վախ և տագնապ, սիրո զգացողության կորուստ, սառնություն և օտարացում: 2. Նախամուսնալուծական մտորումների և հիասթափության փուլ – ենթադրում է ցավի, ապագայի հանդեպ վախի, շոկային տագնապահարույց վարքագծի դրսևորումներ, անգամ նախկին զուգընկերոջն ամեն ձևով հետ բերելու ցանկություն: 3. Իրավաբանական ամուսնալուծություն – ենթադրում է ամուսնալուծության գործընթացի իրավական կարգավորում, դեպրեսիվ հոգեվիճակ, սպառնալիքներ, անգամ ինքնասպանության մտքեր և սպառնալիքներ: 4. Տնտեսական ամուսնալուծություն – ենթադրում է արդեն իսկ ամուսնալուծված զույգերի տնտեսական, ֆինանսական, կենցաղային փոխհարաբերությունների կարգավորում: 5. Ծնողական պարտականությունների բաշխում, խնամակալական գործընթացի կարգավորում: 6. Նոր փոխհարաբերությունների հաստատում, սոցիալական նոր շփումներ, տխրության և լավատեսության համատեղ դրսևորում, զգացմունքների երկարժեքություն, «նոր կյանքի» ձևավորում, ընտանիքի առկա անդամների պարտականությունների նորովի վերադասավորում: 7. Հոգեբանական ամուսնալուծություն – ենթադրում է ուժերի վերագնահատում, ինքնավստահություն, ինքնագնահատականի և անձնային աճի նորովի դրսևորում, նոր սիրո փնտրտուք, նոր և երկարատև փոխհարաբերությունների պատրաստակամություն[9, էջ 329–364]:

Այժմ փորձենք անդրադառնալ նաև ամուսնալուծության ռիսկերին, քանի որ ներընտանեկան բախումները ծագում են ամուսինների հիմնական պահանջմունքների անբավարարվածությունից, ինչն էլ ամուսնալուծության հիմնական վտանգ կամ ռիսկ է ծնում: «Ռիսկ» ասելով սովորաբար հասկանում ենք վտանգի առկայություն կամ ակնկալում, այսինքն՝ ընտանիք կազմող մարդիկ միշտ էլ գտնվում են ամուսնալուծվելու որոշակի ռիսկի առջև: Այս երևույթը (ռիսկային գործոնների որոշակի տեսակների ազդեցությունը ամուսնալուծության գործընթացում) ուսումնասիրել են մի շարք գիտնականներ՝ Է. Թիյտը, Ա. Ի. Վոլկովան, Տ. Մ. Տրապեզնիկովը և ուրիշներ: Է. Թիյտը ռիսկային գործոններն անվանել է «ամուսնալուծության վտանգի գործոններ» կամ «ամուսնության քայքայման վտանգի գործոններ» [9, էջ 221–233]: Գիտնականն առանձնացրել է գործոնների երեք խումբ.1. ամուսնալուծվողների անձի հետ կապված վտանգներ (ռիսկային գործոններ). այս խմբում հեղինակը ներառում է ամուսնացողների ծագումը, ծնողների ազդեցությունը, հոգեբանական առանձնահատկությունները և այլն. 2. զույգի առաջնային համատեղելիությունը, այսինքն՝ նրանց ծանոթության պայմանները, ամուսնանալու դրդապատճառները. 3. ռիսկային գործոններ, որոնք ծագում են արդեն ամուսինների համատեղ կյանքի ընթացքում. այս խմբում հեղինակը ներառում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են, օրինակ, ընտանիքի տնտեսական վիճակը, բնակարանային պայմանները, նաև դերային սպասումների և դրանց իրականացման անհամապատասխանությունը: Հեղինակը պնդում է, որ ռիսկային գործոնները որոշվում են երկրորդային անհամատեղելիությամբ, ամուսինների ոչ ճիշտ (ոչ համարժեք) վարքով, ընտանեկան բախումներով, սեռական աններդաշնակությամբ ու հարբեցողությամբ: Անշուշտ չենք կարող այս տեսակետը համարել

վերջնական ու հիմանական, քանի որ այն դեռևս հետազոտման և առավել մանրամասն վերլուծության կարիք ունի:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ամուսնալուծությունների հիմնական պատճառները ամուսինների միջև ծագող այնպիսի բախումներն են (առաջին հերթին՝ դերային), որոնք հաճախ վերածվում են ճգնաժամերի, որոնց պայմաններում կողմերն այլևս չեն կարող գոյակցել, լիարժեք կերպով կատարել իրենց փոխկապակցված դերերը և պետք է հեռանան միմյանցից թե՞ հոգեբանորեն, թե՞ տարածականորեն: Պետք է ասել, որ մեր հասարակության մեջ վերոգրյալ երևույթների ռիսկային գործոնների և ճգնաժամային փոխհարաբերությունների հնարավորինս հաղթահարմանն ուղղված մեխանիզմների կիրառումը կարող է նվազեցնել ամուսնալուծությունների առաջացումը: Մասնավորապես սոցիալ-հոգեբանական այս հիմնախնդրի լուծմանը էականորեն կարող է նպաստել այն, որ ընտանիք կազմող զույգերը ունենան սպասվելիք դերային հարաբերությունների մասին իրական, ադեկվատ պատկերացումներ, այսինքն սթափ և պարզ դատերի առ այն, թե յուրաքանչյուրն ինչ տեղ և դեր պետք է զբաղեցնի ապագա ընտանիքում: Ներկայումս նման սոցիալականացնող գործոններ հիմնականում համարվում են առաջնային ռեֆերանտային խմբերը՝ ընտանիքը, մոր և հոր գործոնը, ինչպես նաև այն միկրոմիջավայրը, որտեղ մեծանում է ապագա զույգերից յուրաքանչյուրը: Ներկայումս Հայաստանի Հանրապետության դպրոցների կրթական ծրագրերում, տարբեր առարկաների դասագրքերում հնարավորինս վերլուծվում է ընտանիքը և նրա հիմնախնդիրները, ինչը շատ լուրջ քայլ է ընտանիքի մոդելի պահպանման առումով, քանի որ եկող սերունդը պետք է ունենա պատկերացում նաև այս համատեքստում, ինչը շատերի համար ֆունդամենտալ է համարվում: Ամուսնալուծությունների կանխարգելման արդյունավետ գործոն է համարվում նաև ապագա ամուսինների, ինչպես նաև արդեն ամուսնացած անձանց շրջանում ընտանեկան կայուն փոխհարաբերությունների թեմայով հատուկ դասընթացների կազմակերպումը, որի հիմնական ուղենիշը պետք է հիմնված լինի ընտանեկան հոգեթերապիայի վրա: Սակայն հասարակության կողմից ընդունված և ինչ որ տեղ նաև ռեֆերանտային խումբ որակվող եկեղեցին և պետությունը ևս կարող են յուրատիպ թերապևտի դերում լինել, եթե հստակ իրագործվի նաև նրանց իրական առաքելությունը: Փաստենք նմանօրինակ մի դեպք, երբ եկեղեցու սպասավորի միջոցով աստծո խոսքը հասցվեց կրթօջախներից մեկը, որտեղ եկեղեցականը պարզ նկարագրում էր ընտանիքի, կնոջ, տղամարդու, մոր և հոր, զավակի և դստեր առաքելության և խորհրդի մասին, մեր ավանդույթների և կենսակերպի մասին: Նրան ունկնդրող երեխաները և նրանցից շատերի ծնողները հնարավորություն ունեցան յուրովի վերաիմաստավորելու իրենց պատկերացումները ընտանիքի, դերերի և կարծրատիպերի վերաբերյալ: Ամուսնալուծության մղող ռիսկերի հնարավորինս նվազեցման գործոն է համարվում նաև այն բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը, որը «սպասվում» է զույգերին անմիջապես հարսանեկան արարողակարգերից հետո, քանի որ ամուսնաընտանեկան կյանքին անցման սահունությունը էապես բարեփոխում է ընտանեկան կյանքի որակը, ժամանակ և հնարավորություն է ընձեռում զույգերին փոխադարձաբար սոցիալականացնելու մեկը մյուսին, ընկալելու ամուսնական կյանքի կենցաղային հարթության հիմնական կողմերը: Այսօրինակ սահուն անցման ապահովողները որպես կանոն կոչվում են «Սոցիալականացնող ագենտներ» ովքեր իրականում փորձում են շատ լուրջ խնդիր հարթել, այն է՝ օգնել զույգերին ճիշտ տեղորոշվելու դերային բազմության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Ս. Ամիրյան, Խոհեր ընտանիքի միջանձնային փոխհարաբերությունների մասին // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2007. - №1-2. - էջ 103-109:
2. Յու. Ա. Գասպարյան, Ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում: Սոցիոլոգիական հիմնահարցեր. - Եր.: Ճարտարագետ, 2003.- 172 էջ:
3. Ս. Ա. Գևորգյան, Հայ ավանդական ընտանիքի էթնոհոգեբանական և էթնոմանկավարժական ակունքները // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2001. - №2. - էջ 12-21:
4. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու. - Եր.: Բլանկիրատ, 2008. - 116 էջ:
5. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք: ՀՀ պաշտոնական տեղեկագիր. - Եր. : Տիգրան Մեծ, 2008. - 216 էջ:
6. Ս. Ֆ. Հարությունյան, Ներընտանեկան բախում, սիրուց մինչև ապահարզան // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2002. - №2. - էջ 33-37:
7. Ա. Ա. Նալչաջյան, Ընտանեկան կյանքի փակ էջերը. կնոջ նկատմամբ ներընտանեկան բռնությունների խնդրի շուրջ. - Եր. : Զանգակ-97, 2003. -240 էջ:
8. Ս. Ա. Սեդրակյան, Ընտանիքի հոգեբանության խնդիրներին դերային մոտեցման էությունը // Հոգեբանությունը և կյանքը. - Եր. : Զանգակ-97, 2010. - 9-23 էջ:
9. Ս. Ա. Սեդրակյան, Ընտանիքի հոգեբանություն (մեթոդաբանական վերլուծություն). - Եր. : Ուրարտու համալսարան, 2010. - 465 էջ:
10. Ս. Ա. Սեդրակյան, Ընտանիքի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության ժամանակակից հիմնախնդիրները // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2008. - №3-4. - էջ 11-19:
11. Андреева Т. В. Семейная психология. - СПб : Речь, 2004. - 244 с.
12. Берберян А. С., Седракян С. А. Представление о семейных ценностях у современной молодежи России и Армении // Семья в контексте педагогических, психологических и социологических исследований. Материалы междунар. научно- практической конф. (5-6 октября 2010). - Пенза-Ереван-Прага, 2010. - с. 173-179.
13. Кон И. С. Социология личности. - М. : Политиздат, 1967. - 384 с.

ПРЕОДОЛЕНИЕ РИСКОВ РАЗВОДА КАК СПОСОБ СОХРАНЕНИЯ СЕМЬИ

АРМИНЕ МУРАДЯН

Кандидат психологических наук

В данной статье обсуждается и исследуется семья как социально-психологический предмет, обсуждаются семейные проблемы, в частности семейные конфликты, кризисы, разводы, факторы риска, из за которых семья разлогается, а также анализируются те механизмы, с помошью которых семейные пары смогли бы преодолеть тяжолую фазу развода.

OVERCOME OF RISKY DIVORCITY AS METHOD SAFETY FOR FAMILY

ARMINE MURADYAN

Candidate of psychological science

This article adresses and briefly analyses the family as a subject of social and psychological research, in particular the current relations between family and society, functions of family, its place and role in the present system are studied, family relantionships, divorced, divorced risks, family crizisises and confliqts. We have also tried to analyse the role social and psychological peculiarities of family and machinery of its relationship with society.